

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթագրություն 1. Կորպորատիվ տեղեկատվություն

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերությունը ձևավորվել է «Էֆես» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերության անվանափոխության միջոցով: Ընկերությունը գրանցվել է պետական ռեգիստրում 22.09.1997թ. և ստացել Փակ Բաժնետիրական Ընկերության կարգավիճակ:

ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 28.03.2008թ թիվ 97 Ա որոշմամբ Ընկերությունը վերագրանցվել է և Ընկերությանը տրամադրվել է ոչ կյանքի ապահովագրության լիցենզիա:

Ընկերությունը գործում է Հայաստանի Հանրապետությունում մայրաքաղաք Երևանում տեղակայված գրասենյակում՝ Տպագրիչների 8 հասցեում:

Ընկերության բաժնետոմսերի 75 %-ը պատկանում է «Ինվեստ-Պոլիս» ՍՊԸ-ին (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Լենայա փողոց, 41 շենք), և 25 %-ը Լևոն Ալթունյանին (Հայաստանի Հանրապետություն, Երևան, Եզնիկ Կողբացու 53, բն. 12)

Ընկերության գործունեության հիմնական նպատակն է աջակցել տնտեսության զարգացման գործընթացին Հայաստանի Հանրապետությունում

լավագույն միջազգային չափանիշներին համապատասխանող ապահովագրական ծառայություններ մատուցելու միջոցով:

Ընկերությունը կարող է իրականացնել ապահովագրություն ոչ կյանքի ապահովագրություն տեսակի հետևյալ դասերով՝

- 1 դժբախտ պատահարներից ապահովագրություն (ներառյալ արդյունաբերական վնաս և մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդություններից),
- 2 առողջության ապահովագրություն,
- 3 ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային),
- 4 փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն,
- 5 հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն,
- 6 գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն,
- 7 ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,
- 8 ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն (պատասխանատվության բոլոր այն տեսակները, որոնք ներառված չեն "Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 10-ից 12-րդ կետերում նախատեսված դասերում),
- 9 երաշխիքի տրամադրում,
- 10 ֆինանսական վնասների ապահովագրություն,
- 11 աջակցության ապահովագրություն, որը ծածկում է ճանապարհորդության մեջ կամ իրենց մշտական բնակության վայրից հեռու գտնվող անձանց աջակցության տրամադրումը,
- 12 օդանավերի (նաև բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,
- 13 օդանավերի ապահովագրություն,
- 14 ջրային փոխադրամիջոցների ապահովագրություն
- 15 ջրային փոխադրամիջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,
- 16 Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ)

Ընկերությունը իր գործունեության մեջ անկախ է օրենսդիր և գործադիր մարմիններից և ղեկավարվում է ՀՀ անձնադրությամբ, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, այլ նորմատիվ ակտերով, ՀՀ կենտրոնական բանկի որոշումներով և ընկերության կանոնադրությամբ:

Ընկերությունը 2011թ մարտի 31-ի դրությամբ ունի 115 աշխատող: 2011թ մարտի 31-ի դրությամբ ընկերության հետ գործակալական գործունեության պայմանագիր ունեցող իրավաբանական անձանց քանակն է 290, իսկ ֆիզիկական անձանց՝ 3:

**Ծանոթագրություն 2 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքերը
Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրություն**

2.1 Սույն Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՍԿ): Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են հիմնականում պատմական արժեքով, բացառությամբ շինությունների, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

2.2. Ապահովագրական պայմանագրեր

Ապահովագրական պայմանագիրը պայմանագիր է, ըստ որի ապահովագրողը ապահովադրից իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ, պարտավորվելով հատուցել ապահովադրին ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում: Ապահովագրական ռիսկը ֆինանսական ռիսկից տարբեր ռիսկ է, որը փոխանցվում է պայմանագիրը տիրապետողից այն թողարկողին: Ֆինանսական ռիսկը սահմանված տոկոսադրույթի, ֆինանսական գործիքի գնի, ապրանքի գնի, արտարժույթի փոխարժեքի, գների կամ դրույքների ինդեքսի, վարկային ինդեքսի կամ այլ փոփոխական պայմանով հնարավոր ապագա փոփոխության ռիսկն է, որը հատուկ չէ պայմանագրի կողմերից որևէ մեկին: Ապահովագրական պայմանագիրը կարող է փոխանցել նաև որևէ ֆինանսական ռիսկ:

2.3. Ապահովագրական պայմանագրերից բխող վաստակած ապահովագրավճար և չվաստակած ապահովագրավճանքի պահուստ

Ապահովագրավճարի վաստակած մասը ճանաչվում է որպես եկամուտ տվյալ ժամանակահատվածում կնքված ապահովագրական պայմանագրերի ուժի մեջ մտնելու օրվանից: Համախառն ապահովագրավճարը պայմանագրով սահմանված ապահովագրավճարն է, իսկ վաստակած ապահովագրավճարը՝ պայմանագրի գործողության սկզբից մինչև հաշվեկշռի ամսաթիվն ընկած ժամանակահատվածին համապատասխան հաշվարկված ապահովագրավճարն է:

Չվաստակած ապահովագրավճարների չափով ձևավորվում է չվաստակած ապահովագրավճարների պահուստ, որը կազմված է ապահովագրական պայմանագրով սահմանված ապահովագրավճարի՝ տվյալ հաշվետու ամսաթվից մինչև պայմանագրի գործողության ավարտն ընկած ժամանակահատվածին համապատասխան ապահովագրավճարի գումարից: Չվաստակած ապահովագրավճարների պահուստը հաշվարկվում է յուրաքանչյուր պայմանագրի համար և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում է՝ պայմանագրի գործողության ժամկետում ռիսկի աստիճանի փոփոխություններն արտացոլելու համար:

2.4. Ապահովագրական վնասներ

Ապահովագրական վնասների հետ կապված ծախսերը ներառում են տվյալ ժամանակաշրջանում կարգավորված և չկարգավորված վնասների ծախսերը՝ նախորդ ժամանակաշրջանում ձևավորված վնասների պահուստների ճշգրտման հետ միասին:

Ներկայացված չկարգավորված պահանջների պահուստը՝ (ՆՉՊՊ) ներառում է հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկայացված սակայն չկարգավորված բոլոր պահանջների կարգավորման գնահատված ընդհանուր արժեքը: Չկարգավորված վնասները գնահատվում են դիտարկելով հաշվետվությունում նշված առանձին հայցերը և կատարելով մասնաճյուղային տեղի ունեցած չհայտարարված պահանջների պահուստին՝ (ՏՉՊՊ), հաշվի առնելով նախորդ ժամանակաշրջանների փորձը, վիճակագրական դիտարկումները:

2.5. Չեռքերման ծախսեր

Ապահովագրական պայմանագրերի ձեռքերման հետ կապված ակտիվիցիոն ծախսերը ծախսագրվում են հաշվետու ժամանակաշրջանում համամասնորեն, իսկ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրի գործողության ավարտին համապատասխանող գումարները ճանաչվում են որպես ապագա ժամանակաշրջանի ծախսեր:

2.6. Վերապահովագրական պայմանագրեր

Ընկերության կայուն և բնականոն գործունեությունն ապահովելու, ինչպես նաև գուտ վնասը սահմանափակելու համար ընկերությունը վերապահովագրում է իր կողմից ստանձնած ապահովագրական ռիսկերի մի մասը: Վերապահովագրության պայմանագրերից բխող ակտիվները, պարտավորությունները, եկամուտը, ծախսերը արտացոլվում են համապատասխան ապահովագրական պայմանագրերի հետ կապված ակտիվներից, պարտավորություններից, եկամտից և ծախսերից գատ, քանի որ անկախ վերապահովագրության փաստից ընկերությունը չի ազատվում իր հետ ուղղակի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող անձանց նկատմամբ ունեցած պատասխանատվությունից:

Վերապահովագրողներին վճարման ենթակա պարտավորությունները և նրանցից ստացման ենթակա գումարները հաշվառվում են ապահովագրական պայմանագրերի հաշվառման սկզբունքների համաձայն՝ հաշվի առնելով նաև համապատասխան վերապահովագրական պայմանագրի պայմանները: Վերապահովագրավճարները ծախսագրվում են այն ժամանակահատվածի համար, որի համար տրամադրվում է վերապահովագրական ծածկույթը, ընդ որում, հաշվետու ամսաթվից մինչև պայմանագրային ժամկետի ավարտին համապատասխան վերապահովագրավճարները ներառվում են վերապահովագրական ակտիվներում:

Վերապահովագրական ակտիվները գնահատվում են յուրաքանչյուր հաշվեկշռի օրվա դրությամբ: Վերապահովագրական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե նրանց սկզբնական ճանաչումից հետո ի հայտ եկած օբյեկտիվ փաստի արդյունքում հայտնի է դարձել, որ ընկերությունը չի կարող վերականգնել ստացման ենթակա բոլոր գումարները: Վերապահովագրական ակտիվների արժեզրկման վնասը ճանաչվում է տվյալ ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

27. Գործառնական և ներկայացման արժույթ

Գործառնական արժույթը դա այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և գործարքների տնտեսական բովանդակությունը: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են հաշվապահական հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՄ-ին համապատասխանեցնելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

Ծանոթագրություն 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընթացիկ տարում ընկերությունն ընդունել է իր գործունեության համար համապատասխան և 2010թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանի համար կիրառելի նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի («ՀՀՄՄ») և ՀՀՄՄ-ի Հաշվետվությունների Մեկնաբանման Հանձնաժողովի («ՀՀՄ») կողմից:

Կիրառվում է 2009թ. հունվարի 1-ից գործող վերանայված «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ը, որի վերանայումն առաջարկում է տերմինաբանական փոփոխություններ, ներառյալ ֆինանսական հաշվետվությունների անվանման և ներկայացման ձևի մեջ փոփոխություններ: Փոփոխությունն ազդում է սեփական կապիտալում սեփականատերերի հետ գործարքների ներկայացման վրա և առաջարկում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունը: Ընկերությունը ներկայացնում է եկամտի և ծախսի հոդվածները և այլ համապարփակ եկամտի հոդվածները մեկ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությամբ՝ ենթագումարներով: Այս փոփոխությունը չի ազդում ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա, բայց կառաջացնի լրացուցիչ բացահայտումների անհրաժեշտություն: Մույն ստանդարտի առաջին անգամ կիրառելու հանգամանքից ելնելով Համեմատական տեղեկատվություն նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար չի ներկայացվում:

Ընկերությունը ՖՀՄՍ 4-ի պահանջների համաձայն 2010 թ հունվարի 1-ից կատարել է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն, որով սահմանվել է ապահովագրական գործակալներին վճարման ենթակա գործակալական միջնորդավճարների, վերապահովագրական բրոքերներին հասանելի բրոքերային միջնորդավճարների գծով ծախսերի և վերապահովագրողներից ստացման ենթակա միջնորդավճարների գծով եկամուտների հաշվառման նոր մոտեցում: Նշված եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքներում ապահովագրական պայմանագրերի գոծողության սկզբից մինչև հաշվեկշռի ամսաթիվը ընկած ժամանակահատվածին համապատասխան մասով, հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտին համապատասխան մասը ճանաչվում է որպես հետաձգված ծախս և ապագա ժամանակաշրջանի եկամուտ: Ընկերությունը ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների նկատմամբ կիրառում է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը՝ սկսած այն ամենավաղ ժամանակաշրջանի սկզբից, որի համար հետընթաց կիրառումն իրագործելի է: Տվյալ դեպքում դա ընթացիկ ժամանակաշրջանի սկիզբն է:

Ծանոթագրություն 4 Հաշվապահական հաշվառման նշանակլի դատողություններ, գնահատականներ և դատողություններ

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով և միջազգային տնտեսական ճգնաժամի ազդեցությամբ:

Հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների, պարտավորությունների, եկամուտների, ծախսերի, հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումների մի շարք գնահատումներ և դատողություններ, որոնք պարբերաբար վերանայվում են: Գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են փոփոխման ժամանակաշրջանում և յուրաքանչյուր հաջորդ ժամանակաշրջանում, որի վրա նշված փոփոխություններն ազդում են:

Մույն հաշվետվություններում արտացոլված է ղեկավարության կողմից ոչ նութական ակտիվի միավորի օգտակար ծառայության ժամկետի գնահատման փոփոխության արդյունքը:

Ծանոթագրություն 5 Ամփոփում

Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլված մեծությունների ներկայացման արժույթ է համարվում Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը՝ դրամը: Արտարժույթով իրականացված գործարքները գրանցված են համարժեք դրամներով՝ փոխարկման հիմք ընդունելով համապատասխան արժույթի համար Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված ակտիվներն ու պարտավորությունները հաշվետու ամսաթվի դրությամբ վերագնահատված են՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթվի դրությամբ: Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրման համար հաստատված ֆինանսական հաշվետվություններում օգտագործված փոխարժեքի համարից: Համարվում են հետադարձ համեմատելի և համարվում են հետադարձ համեմատելի: Հաշվետվությունների պատրաստման ամսաթվին արտարժույթով արտահայտված ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են ՀՀ դրամի և արտարժույթի միջև ՀՀ ԿԲ-ի կողմից տվյալ ամսաթվի համար սահմանված փոխարժեքներով:

2011 թ մարտի 31-ի դրությամբ արտարժույթների փոխարժեքները հետևյալն են

Արժույթ		
1 USD	369.68	դրամ
1 EUR	525.54	դրամ
1 GBP	596.26	դրամ
1 RUR	13.02	դրամ

Հաշվանցում

Ֆինանսական հաշվետվություններում ակտիվների և պարտավորությունների հաշվանցումները կիրառվում են հետևյալ դեպքերում՝ ակտիվների օտարումից ստացված հասույթից հանվում են ակտիվի հաշվեկշռային արժեքը և օտարման հետ կապված ծախսերը, և արդյունքը ցույց է տրվում որպես գուտ շահույթ կամ վնաս (հիմնական միջոցների օտարում, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների օտարում):

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի բերման հետ կապված վերահաշվարկումից եկամուտներն ու ծախսերը իրարից հանվում են և արդյունքն արտացոլվում է այլ համապարփակ եկամուտ բաժնում:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ընկերությունը պահպանել է հետևողականության, անընդհատության, էականության և համադրելի տեղեկատվության սկզբունքները:

Եկամուտների և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը

Ընկերությունում եկամուտները և ծախսերը հաշվառված և ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են հաշվեգրման սկզբունքով: Ընդ որում պահպանված է եկամուտների և ծախսերի ճանաչման համապատասխանությունը: Մասնավորապես, ընկերության կողմից հաշվեգրված հասույթի և այդ հասույթի ստացման հետ կապված ծախսումների հաշվեգրումը կատարված են միաժամանակ այն ժամանակաշրջանի ընթացքում, որին դրանք վերաբերվում են:

Ընկերության հիմնական եկամուտը ձևավորվում է հաշվետու տարվա ընթացքում կնքված պայմանագրերի գծով համախառն ապահովագրավճարներից, նույնիսկ, եթե նրանք ամբողջությամբ կամ մասամբ են վերաբերվում տվյալ ժամանակաշրջանին:

Պայմանագրերի կնքման հետ կապված ակվիզիցիոն ծախսերը՝ գործակալական միջնորդավճարները, ծախսագրվում են հաշվետու ժամանակաշրջանին համապատասխանող մասով, իսկ հաշվեկշռի ամսաթվից մենչև պայմանագրի ավարտին համապատասխան ծախսերը կապիտալացվում են և արտացոլվում որպես հետաձգված ապագա ժամանակաշրջանի ծախսեր:

Հիմնական գործունեությունից ստացվող եկամտի հիմնավորող փաստաթուղթ է համարվում ՝ թողարկված ապահովագրական վկայագիրը: Ընդ որում, եկամուտների ճանաչման ամսաթիվ է համարվում հետևյալ երկու ամսաթվերի՝ վկայագրերի թողարկման (վավերացման) և վկայագրերի գործողության սկզբի ամսաթվերից առավելագույնը:

Ապահովագրական վկայագրերի հետագա փոփոխությունները իրականացվում են ապահովագրական վկայագրերի անբաժանելի մաս կազմող հավելվածների թողարկմամբ, որոնց գծով առաջացող եկամուտները կամ ծախսերը նույնպես ճանաչվում են հավելվածների թողարկման և նրանց գործողության մեջ մտնելու ամսաթվերից առավելագույնով:

Ընկերությունը ապահովագրական պայմանագրերից բխող ապահովագրավճարների եկամուտ ճանաչմանը զուգընթաց ծախսագրում է վերապահովագրական պայմանագրերի համաձայն վերապահովագրողներին փոխանցման ենթակա ապահովագրավճարները: Միաժամանակ վերապահովագրության պայմանագրով նախատեսված կոմիսիոն վարձատրության գումարները ճանաչվում են որպես եկամուտ հաշվետու ժամանակաշրջանին հասանելիք գումարի չափով, գումարի մնացած մասը հաշվառվում է որպես ապագա ժամանակաշրջանի եկամուտ: Ոչ ռեզիդենտ վերապահովագրողներին հաշվեգրված վերապահովագրավճարների գծով բյուջեի նկատմամբ առաջացող ոչ ռեզիդենտի շահութահարկի պարտավորությունը ճանաչվում է վերապահովագրողին պարտքի գումարի փաստացի վճարման ժամանակ:

Համախառն ապահովագրավճարներից ստացված եկամուտը ճշգրտվում է չվաստակած եկամտի չափով՝ այսինքն ապագա ժամանակաշրջաններին վերաբերվող եկամուտը ճանաչվում է որպես ծախս հաշվետու ժամանակաշրջանում:

Այդ նպատակով ընկերությունը ձևավորում է չվաստակած ապահովագրավճարների պահուստ, որը հաշվարկվում է յուրաքանչյուր ապահովագրական պայմանագրի համար և որը նվազեցվում է ՀՀ ԿԲ կողմից սահմանված չափանիշների համապատասխան հուսալի համարվող վերապահովագրողների ապահովագրավճարների մասով:

Այսպիսով ապահովվում է հիմնական գործունեության մասով հաշվեգրված եկամուտների և ակվիզիցիոն ծախսերի ճանաչման համապատասխանությունը:

Համաձայն ՀՀ օրենսդրության, ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվ իրավական ակտերի և ընկերության կողմից ընդունված ներքին

կանոնակարգերի ընկերությունը հաշվարկում է նաև վնասների, հավասարակշռման, բոնուսների և գեղչերի ապահովագրական պահուստներ:

Շահութահարկ

Ընկերության կողմից շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս: Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է: Այն հաշվարկվում է կիրառելով շահութահարկի դրույքաչափը, որն ուժի մեջ է եղել կամ ըստ էության ուժի մեջ կլինի հաշվեկշռի ամսաթվի դրությամբ և նախորդ տարիների վճարման ենթակա շահութահարկի գծով կատարված ճշգրտումները: Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորությունների մեթոդը՝ հետաձգված հարկի ձևավորում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարներից առաջացած ժամանակավոր տարբերությունների նկատմամբ: Ընկերությունը ձևավորել է նաև հարկային ակտիվ, որը հաշվանցվել է հետաձգված հարկային պարտավորության գումարի հետ և հաշվեկշռում արտացոլված է "Հետաձգված հարկային պարտավորություններ" տողում:

Ֆինանսական գործիքների ճանաչումը և չափումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական գործիքների, մասնավորապես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, իրական արժեքի հիման վրա: Ընկերության ֆինանսական ակտիվները դասակարգված են որպես վաճառքի համար մատչելի, որոնք ձեռք բերման պահին ճանաչվում են իրենց սկզբնական արժեքով, որն իրենցից ներկայացնում է դրանց դիմաց տրված փոխհատուցման իրական արժեքը՝ ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքների փոփոխություններից առաջացած եկամուտը և ծախսը ճանաչվում են այլ համապարփակ արդյունքում;

Ընկերությունը ֆինանսական ակտիվները ապաճանաչում է, երբ կորցնում է վերահսկողությունը պայմանագրային իրավունքների նկատմամբ, որոնք կազմում են այդ ակտիվը: Վերջինս տեղի է ունենում, երբ պայմանագրում սահմանված օգուտների նկատմամբ իրավունքները իրացվում են, իրավունքների ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է կամ ընկերությունը հրաժարվում է այդ իրավունքից:

Վաճառքի համար մատչելի և առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները վաճառքի ժամանակ ապաճանաչվում են, նրանց դիմաց ստացվելիք համապատասխան գումարները ճանաչվում են որպես հասույթ և այլ համապարփակ արդյունքում ձևավորված գումարը վերադասակարգվում է ճանաչվելով շահույթ/վնասում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրաց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները, որոնք ներդրված կարող են լինել ՀՀ ռեզիդենտ և օտարերկրյա բանկերում :

Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Ընկերությունում հիմնական միջոցները ներկայացված են նրանց սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության ու արժեզրկումից կորուստների տարբերությամբ:

Հիմնական միջոցների մաշվածությունը հաշվարկվում է նրանց օգտակար ծառայության ժամկետի ընթացքում կիրառելով գծային մեթոդը: Մաշվածության հաշվարկումը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման և շահագործման պահին հաջորդող ամսից: Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը կապիտալացվում են և ամորտիզացվում նրանց օգտակար ծառայության և վարձակալության ժամկետներից նվազագույնի ընթացքում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության սահմանված ժամկետներն են՝

Շենք-շինությունների համար	20 տարի
Համակարգչային սարքավորումների համար	1-3 տարի
Տնտեսական գույքի համար	1-5 տարի
Տրանսպորտային միջոցների համար	5 տարի
Այլ հիմնական միջոցների համար	1-5 տարի

Մինչև 50 000 դրամ դրամ արժողությամբ հիմնական միջոցների համար սահմանվում է 1 տարի նվազագույն ժամկետ:

Հիմնական միջոցների ծառայության ընթացքում հետագայում նրանց վրա կատարված ծախսումները ավելացվում են տվյալ միավորի հաշվեկշռային արժեքին, երբ դրանց շնորհիվ ակնկալվում է ավելի շատ ապագա տնտեսական օգուտների ներհոսք դեպի կազմակերպություն, քան ակտիվի սկզբնական գնահատումից: Հակառակ դեպքերում բոլոր հետագա ծախսումները ճանաչվում են որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախս:

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները արտացոլված են ձեռք բերման արժեքով հանած կուտակված մաշվածությունը: Ոչ նյութական ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է գծային եղանակով՝ ելնելով նրանց օգտակար ծառայության ժամկետներից, իսկ դրա անհնարինության դեպքում օգտակար ծառայության ժամկետը ընդունվում է 10 տարի: Այսպես՝

Համակարգչային ծրագրերի համար ընտրված է	1-3 տարի
Այլ ոչ նյութական ակտիվների համար՝	10 տարի:

Ծանոթագրություն 6 Հետաձգված ձեռքբերման ծախսեր

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրությ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
1. Հետաձգված ծախսեր գործակալական միջնորդավճարների գծով	283,819	134,570
2. Հետաձգված ծախսեր վերապահովագրական բրոքերային միջնորդավճարների գծով	30,958	37,145
Ը ն դ ան են ը	314,777	171,715

Ծանոթագրություն 7. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

ա. Հիմնական միջոցներ

	Շենքեր	Համակարգչային և կապի միջոցներ	Փոխադրա միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմն.միջոց.գծով կապիտալները.	Վարձ. հիմն. միջոց. գծով կապիտալ ներդ.	Ընդամենը
Սկզբնական արժեք	---	---	---	---	---	---	---
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	67,000	12,616	19,347	21,240			120,203
Ավելացում		26,643	13,052	31,047			70,742
Օտարում			(3,773)				(3,773)
Արժեզրկում							-
Վերագնահատում	(1,400)						(1,400)
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	65,600	39,259	28,626	52,287			185,772
Ավելացում		9,053	16,269	3,200			28,522
Օտարում							-
Վերագնահատում*							-
Արժեզրկում							-
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							-
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	65,600	48,312	44,895	55,487			214,294

Կուտակված մաշվածություն	---	---	---	---	---	---
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	-	11,586	10,666	9,215		31,467
Ավելացում	3,350	4,884	3,555	5,570		17,359
Օտարում			(3,314)			(3,314)
Արժեզրկում						0
Վերագնահատում	(3,350)					(3,350)
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	-	16,470	10,907	14,785		42,162
Ավելացում	820	6,821	1,836	3,365		12,842
Օտարում						-
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում						-
Արժեզրկում						-
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	820	23,291	12,743	18,150		55,004
Չուտ հաշվեկշռային արժեք	---	---	---	---	---	---
Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	64,780	25,021	32,152	37,337		159,290
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	65,600	22,789	17,719	37,502		143,610

բ. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Հեղինակային իրավունքներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվ. գծով կապիտալ ներդ.	Ընդամենը
Սկզբնական արժեք	---	---	---	---	---	---
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	3,772			199,903	5,000	208,675
Ավելացում	9,180					9,180
Օտարում				(199,903)	(5,000)	(204,903)
Արժեզրկում						-
Վերագնահատում						-
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	12,952			-	-	12,952
Ավելացում						-
Օտարում	(3,012)					(3,012)
Վերագնահատում *						-
Արժեզրկում						-
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում						-
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	9,940			-	-	9,940
Կուտակված մաշվածություն	---	---	---	---	---	---
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	3,238			96,770		100,008
Ավելացում	793			103,133		103,926
Օտարում				(199,903)		(199,903)
Արժեզրկում						-
Վերագնահատում						-
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	4,031			-		4,031
Ավելացում	534					534
Օտարում	(3,012)					(3,012)
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում						-
Արժեզրկում						-
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	1,553			-		1,553
Չուտ հաշվեկշռային արժեք	---	---	---	---	---	---
Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	8,387			-	-	8,387
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	8,921			-	-	8,921

Ծանոթագրություն 8. Դերիտորական պարտքեր և կանխավճարներ

	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրությ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
1 Կանխավճարներ մատակարարներին	10,319	18,426
2 Կանխավճարներ աշխատակիցներին	7	4,223
3 Շահութահարկի կանխավճար	29,541	29,006
4 Այլ կանխավճարված հարկեր, տուրքեր	74	-
5 Այլ ստացվելիք գումարներ	696	913
6 Աշխատակիցներին տրված առհաշիվ գումարներ	27	92
7 Այլ ընթացիկ ակտիվներ	14,837	23,412
8 Ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ	58,500	45,000
9 Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված փոխառություններ	100,000	-
10 Այլ դերիտորական պարտքերի գումարների հնարավոր կորուստների պահուստ	(511)	(197)
Ը ն դ ա մ ե ն ը	213,490	120,875

Ծանոթագրություն 9 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրությ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթեր	-	73,522
բ. ՀՀ պետական տոկոսային արժեթղթեր	1,649,655	836,533
գ. ՀՀ ոչ պետական արժեթղթեր	84,900	84,900
դ. Այլ փայլամասնակցություններ	43,462	40,319
Ը ն դ ա մ ե ն ը	1,778,017	1,035,274

Ծանոթագրություն 10

Ավանդներ բանկերում

	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրությ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ռեզիդենտ բանկերում ներդրված ընթացիկ ավանդներ (դրամային)	294,834	136,561
բ. Ռեզիդենտ բանկերում ներդրված ընթացիկ ավանդներ (արժուրային)	1,041,265	1,100,451
գ. Ռեզիդենտ բանկերում ներդրված ոչ ընթացիկ ավանդներ (դրամային)	104,000	50,000
դ. Ռեզիդենտ բանկերում ներդրված ոչ ընթացիկ ավանդներ (արժուրային)	325,254	158,147
Ը ն դ ա մ ե ն ը	1,765,353	1,445,159

Ստացվելիք տոկոսներ և շահաբաժիններ

	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրությ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ռեզիդենտ բանկերում ներդրված ընթացիկ ավանդների գծով ստացվելիք տոկոսներ (դր)	3,934	1,247
բ. Ռեզիդենտ բանկերում ներդրված ընթացիկ ավանդների գծով ստացվելիք տոկոսներ (արժ)	20,752	43,829
գ. Ռեզիդենտ բանկերում ներդրված ոչ ընթացիկ ավանդների գծով ստացվելիք տոկոսներ (դր)	2,238	221
դ. Ռեզիդենտ բանկերում ներդրված ոչ ընթացիկ ավանդների գծով ստացվելիք տոկոսներ (արժ)	8,573	3,013
ե. ՀՀ պետական տոկոսային արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ	78,942	25,621
զ. ՀՀ ոչ պետական արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ	1,008	2,103
է. Ռեզիդենտ ֆիզ.անձանց տրամադրված ընթացիկ փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ	88	26
ը. Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված փոխառություններից ստացվելիք տոկոսներ	370	-
Ը ն դ ա մ ե ն ը	115,905	76,034

Ծանոթագրություն 11

Վերապահովագրական ակտիվներ

	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրությ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Վերապահովագրողի մասնաբաժինը չվաստակած ապահովագրանքի պահուստում	240,551	275,922

բ. Վերապահովագրողի մասնաբաժինը ներկայացված չկարգավորված պահանջների պահուստում	114,997	174,757
Ը ն դ ա մ ե ն ը	355,548	450,679

Տեխնիկական պահուստներ

	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրությ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Չվաստակառ ապահովագրավճարների պահուստ	2,081,379	617,219
